

որին կցուած է մի քարաէզ, նա ունի բազմաթիւ ուրիշ գործեր էլ, որոնք մի առ մի թուելը միտք չունի: Նորա շատ յօդուածները ղետեղուած են «Zeitschrift der Deutschen Morgenländischen Gesellschaft» և «Zeitschrift für Vergleichende Sprachforschung» հանդէսներում:

Նորա թաղումը տեղի ունեցաւ Ֆրայբուրգում 23-ն յունուարի: Շտրազբուրգի համալսարանում նորա ուսուցչապետական ամբիօնը գրուեց Դր. Քարստ, որը իւր մեծահատոր աշխատութիւններով Կիլիկեան հայաբարբառի և Սմբատի Օրէնագրքի մասին մեծ ապագայ է խոստանում:

Մ. ԽԱՅԻԿԵԱՆ

ԴԱԻԻԹ ՀԱՐՔԱՑԻՆ

Ե Ի

ՊԵՏՈՅԻՑ ԳԻՐԲԸ

Դաւիթ Հարքացու անունով միայն մի գրութիւն է հասել մեր ձեռքը, չհաշուելով նորան վերագրուած Անյաղթի յայտնի փիլիսոփայական երկերը և ուրիշ կրօնական գրութիւններ, որոնց մասին միայն անորոշ տեղեկութիւն ունինք*: Այդ գրութիւնը Դաւուստ Տ. Մկրտչեանի հրատարակած «Դաւիթ Հարքացւոյ եւ փիլիսոփայի որ յիմաստասիրական եւ յիմաստասիրելի հարցուածս» տետրակն է**, որ կռուան կարող է լինել մեզ մատենադրա-

* «Արարատի» 1907 թ. Յունուարի և Մարտի տետրակներում պարզել ենք, որ Դաւիթ Հարքացին և «Բան հաւատոյ» գրութեան (Արարատ 1906 թ. Մարտ) հեղինակ Դաւիթ փիլիսոփան նոյն անձնաւորութիւնն է, և թէ նա ապրում էր Է. դարու երկրորդ կիսում Անտառտաս կաթողիկոսի և Աշոտ պատրկի ժամանակները:

** Դաւիթ Հարքացի. Վաղարշապատ, 1903:

կան կարեւոր խնդիրներ շօշափել, եթէ նոյն իսկ Հնարաւորութիւն չունենանք վերջնական լուծում տալ: Այս անգամ կամենում ենք այդ գրութեան և Պիտոյից Գրքի առնչութիւնը ցոյց տալ:

Ուշադրութեամբ համեմատելով Դաւիթ Հարքացու այս գրութիւնը Պիտոյից Գրքի «Սահմանք հասարակ տեղւոյ» մասի «Յաղագս շան» նախակրթութեան (προγυμνασμα) կամ օրինակի հետ, նկատում ենք բառերի և դարձուածներին այնպիսի նմանութիւններ, նոյն իսկ մտքի հետեւողականութիւն, որ միայն երկու հեղինակների առնչութեամբ կարելի է բացատրել: Դաւիթ Հարքացին իւր գրութեան մի մասում (եր, 14—16) խօսում է մարդկային ցանկութեան անբարոյական հետեւանքների մասին, ինչպէս և Պիտոյից Գրքի վերոյիշեալ նախակրթութեան հեղինակը քննութեան և դատապարտութեան է ենթարկում շնացող մարդու տիպը: Երկու փոքրիկ գրութիւնների երկ երկու երեսների մէջ նկատում են բաւական մեծ թուով նման բառեր, դարձուածներ և մտքեր:

Պիտոյից գիրք.

Հարքացի.

Կամակար 390. Այլ կամակոր բարում խորհրդոց յայս միտեալ վարեցու ճակաճանութիւն... և ընդդէմ վեհին (Աստուծոյ) և մարդկան զիւր չար խորհուրդն կանգնեաց համբարտակ 388—389:

Ապա սկսաւ կամակարն ռնցանի կինաց 16 եր... և կամակոր բարում զասուածային աւեհնսն քամանել կրքեցաւ մարդն 24:

... զառաջարկութիւնն փորձեցաւ գործով կասարել... զչար կամացն առաջարկութիւն դիւրաւ կարացցէ կասարել 399:

Գործով կասարի բելադրութիւն 25 գործով կասարի զանեցեքն 21:

... զօրինացն քամահանս 389 զի կշիւս զիւրոյ սերմանցն բերս ըմբոշխնեսցէ պտուղ զմահ:

զպատուելրանն քամահելով 15 24 քանզի զսորայն ասացի պտուղ զմահ է 15:

Շնացողն առաջուց ևս յանցանք է գործել անշուշտ, ինչպէս... Յանկութիւն ընչից և հեշտութեան ծնում է... և սա զրկողու-

գրկութիւնս, գողութիւնս, սպանութիւնս, կախարգութիւնս . 389: քիւնն և նա գգողութիւն և զյափշտակութիւն և զսպանումն . . և զշարահնար դեղատուութիւն որում դուք կախսեղ ասէք 16:

Այսպիսի նմանութիւնները կարող էին լինել պատահական և մենք իրաւունք չէինք ունենալ որ և է առնչութեան մասին մտածել, եթէ նման բառեր և դարձուածներ բովանդակող հատուածների մէջ մտքերի նմանութիւն և երբեմն հետևողականութիւն չնկատէինք:

«Յաղագս շան» նախակրթութեան հեղինակը մարդկային ազգը անասնական սեռից զանազանում է «բանիւ, որով նմանահաւասար վեհին (Աստուծոյ) տիրեմք հողածին կենդանեաց» . . . Հարքացին ևս Ա. և ԺԱ. հարցերի պատասխաններով մարդուն «Աստուծոյ պատկեր» և կենդանիներից «առաւելեալ բանիւ» է համարում:

Պիտոյից Գիրքը ուրիշի կնոջը մոլորեցնողին այսպէս է նկարագրում. «վասն որոյ քազմապաճոյճ զարդարանօք պճնեալ զինքն՝ ակնախտիդ կազմեաց որոգայթ. և լրբենի երեսօք խնձղանաց և լիտի խեղկատակութեամբ յողացաւ գերել զմիտս կնոջն, և մեծակաշառ կապինօք, և գիներբու հացկերութեամբ կախարդեալ հեշտացոյց» 387—388: Սոյն միտքը չարութեան աւելի ընդհանուր գաղափարով արծարծում է և Հարքացին (եր. 14). «Իսկ չարն (իմա հեշտասէրն)՝ ի ներքոյ դառն ապաժոյժ զեղւոյ, իսկ ի վերոյ քարեկերպ գունեալ, իբր քաղցր աւծմամբ, զի հրապուրանօք խողտեալ զքիմն պարարիցէ, բարձիւ և բարեաւ զտեսաւղսն տուփացուցանէ» . . . :

Ըստ Պիտոյից գրքի (եր. 387) ընտանեկան սրբութեան կամ բարոյական կեանքի արդիւնքներից մէկն է «Վեհավայր տաճարաց ըզձակերտ շինութիւն, և վեհիցն (աստուածոց) արժանաւոր քարերանութիւն պաշտամանց», իսկ ըստ Հարքացու չարի հետեանքն է «անհոգացողութիւն զԱստուծոյ, յորմէ մեղկութիւն պաշտաման լինի»: Առաջին հեղինակը նոյն միտքը արտայայտել է դրական հետեանքներով, իսկ Հարքացին բացասական:

Պիտոյից Գրքի հեղինակի կարծիքով շնացողը, որ գայ-
թակղեցնում է ուրիշի կնոջը «յանասնական անկարդ
խառնակութիւն» դէմ է զնում Աստուծոյ և մարդկանց
կամքին, իսկ ըստ Հարքացու հեշտասիրութեան մեղքի
մէջ ընկնողը օտարանում է Աստուծոյ, արհամարհելով
նորա պատուիրանը. «ապա սկսանի կամակարն անցանել
կենաց հեշտութեան մարմնոյ և որովայնամոռութեան»:

Այս բոլորի վերան կարող ենք աւելացնել և մի եր-
կու բառացի նմանութիւն ոչ նոյն «Յաղագս շան» վերնա-
գրով նախակրթութիւնից, այլ տարբեր մասերից: Պիտո-
յից Գիրք 431 զանցեքն կատարելով—Դաւիթ Հարքացի
21 գործով կատարել զանցեքն: Պիտոյից Գիրք 372. վար-
ժումն է ամենայն ինչ—Դաւիթ Հարքացի եր. 9 վարժումն է
ամենայն ինչ: Այս վերջին բառացի նմանութեան առան-
ձին արժէք չէինք տալ, որովհետեւ իբրեւ իմաստասիրական
մի խօսք երկու հեղինակներին էլ կարող էր մատչելի լի-
նել ուրիշ աղբիւրներից, բայց նախընթաց ցուցումներն
ի նկատի ունենալով հարկադրուած ենք ընդունել, որ
Պիտոյից գրքի այլ և այլ մասերից առնուած այդ երկու
նախադասութիւններն ևս ապացոյց են, թէ այդ գրքի որոշ
մասերի և Դաւիթ Հարքացու փոքրիկ գրութեան մէջ մի
առնչութիւն կայ:

Առաջին միտքը, որ կարող է ծագել այս առնչու-
թեան բացատրութեան համար այն է, թէ Դաւիթ Հար-
քացին օգտուել է Պիտոյից գրքից: Ընդհակառակը ինել չի
կարող, որովհետեւ «Յաղագս շան» վարժութիւնը մի ամբող-
ջութիւն է և այն էլ թարգմանուած կամ քաղուած յունա-
րէն աղբիւրից: Սակայն, կարծում ենք, այդ կախումը զրա-
կան չէ սովորական մտքով. բոլորովին մի օտար հեղինակ
դժուար թէ կարողանար Պիտոյից գրքի այդ հատուածից այն
ձևով օգտուել, ինչպէս Հարքացին, որի գրութեան ձևն ու
նիւթը իւր ամբողջութեամբ տարբեր է ենթադրեալ աղբիւ-
րից: Այդ առնչութիւնը հասկանալի է հոգեբանօրէն, երբ
ընդունենք, թէ «Յաղագս շան» վարժութեան թարգմանիչն

ու մշակողը նոյն Հարքացին է, որ այդ վարժութեան մի քանի մտքերը, բառերն ու դարձուածները ցրուած գործադրել է իւր հարց ու պատասխանի մէջ, ինչպէս իւրաքանչիւր հեղինակ նոյն դարձուածներն ու մտքերը գործադրում է իւր տարբեր աշխատութիւնների մէջ: Ուղում ենք ասել, թէ Հարքացին ինքն է այդ նախակրթութեան, գուցէ և ուրիշ շատերի գրողն ու մշակողը: Այս մտքին կռուան կարող են լինել ոչ միայն մատենագրական հին տեղեկութիւնները, առնուազն ժ.Բ. զարից, որոնք Դաւիթ փիլիսոփայ Հարքացուն են վերագրում Պիտոյից Դիրքը, այլ և այդ դրքի ամբողջութեան զէմ նկատուած փաստերը: Մեր կարծիքով Պիտոյից զիրքը իւր ամբողջութեամբ մի հեղինակի գործ չէ, բացի Մովսէս քերդողից, այնտեղ մասն ունին Դաւիթ փիլիսոփայ Հարքացի և Խսրովիկ Թարգմանիչ:

Պիտոյից զիրքը վերագրւում է Մովսէս քերդողին և Դաւիթ փիլիսոփայ անյաղթին, Մովսէս անուան տակ յաճախ հասկացուած է Խորենացին, իսկ Դաւիթ անուան տակ Հարքացին: Այս աշխատութիւնը Մովսէս քերդողի կամ Խորենացուն են վերագրում ոչ միայն ձեռագիրները, յատկապէս վերջաբանը, այլ և պատմիչներից՝ Ասողիկ և Գանձակեցին: Ասողիկ տեղեկութիւնն այս մասին փոքր ինչ անորոշ է, որ համարելով նորան Գիւտի ժամանակակից՝ ասում է. «մեծ փիլիսոփայն Հայոց Մովսէս, որ զճարտասանական արուեստ ի գործ առնու ի Հայս»*: Սակայն կասկածի տեղիք չինել չի կարող, որ այս ակնարկը Պիտոյից գրքին է վերաբերում և գուցէ հէնց վերջաբանի վերնագրի արձագանգն է «ճարտասանական արուեստ» դարձուածը, ինչպէս ենթադրում է Բաումգարտնէր**: Գանձակեցու տեղեկութիւնն աւելի պարզ է, նա

* Ս. Պ. ի տպ. Ստ. Մալխասեանի, 1885, էր. 79.

** Über das Buch «die Chrie»,—Zeitschrift der Deutschen Morgenländischen Gesellschaft. 40. Band. III, Heft. Leipzig, 1886.

Խորենացու միւս երկերի շարքում յիշում է և Պիտոյից զիրքը՝ որ գրել է «Ի խնդրոյ Թէոդորի ումեմն»^{*}։ Պիտոյից զիրքը Դաւթի գործ են համարում այլ և այլ մատենագրական յիշատակարանների Պատճառաց զիրքը և Սիւնեաց զպրոցի ներկայացուցիչները յատկապէս Առաքել Սիւնեցին Սահմանաց զրքի վերլուծութեան մէջ^{**}։

Ա՛րդ, ո՞րն է այս տեղեկութիւններից ճիշդը։ Բառում զարտներ իւր գեղեցիկ աշխատութեան մէջ ցոյց է տուել արդէն, որ Պիտոյից զիրքը իւր տեսական մասով Թարգմանաբար քաղուածք է կամ մշակութիւն Ափթոնիոսի մասամբ ևս Թէոնի նման աշխատութիւններից։ Նախակրթութիւնների (προγυμνασια) կամ օրինակների մի մասի համար հեղինակն օգտուել է վերոյիշեալ երկու աղբիւրներից, մասամբ ևս մի անյայտ զրքից, որ Նիկողայոս Իմաստակի համար ևս աղբիւր է եղել, իսկ մնացածներն ինքնուրոյն են[†]։

Տեսութիւնների Թարգմանութիւնը, ինչպէս և բնաբաններից մի քանիսը անշուշտ մի մարդու գործ է և այդ մարդը Մովսէս քերդոզն է վերջաբանի վկայութեամբ։ Բայց նոյնը պնդել չենք կարող բոլոր նախակրթութիւնների կամ վարժութիւնների նկատմամբ։ Պիտոյից զրքի նոյն իսկ Թեթեւ ընթերցանութեան ժամանակ նկատելի է, որ տեսական մասի և վարժութիւնների լեզուն շատ տարբեր են միմեանցից։ Տարբերութիւն նկատուում է նաև

* Ոսկեան Յովհաննիսեանցի հրատւ Մոսկուա. 1858 եր. 17։

** Տպագրուած է՝ Մաղրաս, 1797 թ. եր. 165, 172։

† Ափթոնիոսն ապրում էր Դ. դարում, Թէոնը ըստ ոմանց Ագրիանոսի ժամանակ, իսկ Նիկողայոս Իմաստակը Յ. դարու վերջերին։ Պիտոյից զիրքն իւր անունն ստացել է հոետորական վարժութիւններից մէկի անունով, որ Պիտոյք—*χρεία* էր կոչւում։ Պիտոյքը մի գլուխ է միայն ամբողջութիւնից, որ հաւանօրէն բաղկացած էր 12—14 մասերից կամ գլուխներից, Ափթոնիոսից առաջ եղած հեղինակների զործերը 12 գլուխներից էին բաղկացած, իսկ նա 14 է դարձնում։ Gesch. der Griech. Litteratur, Christ. III Aufl München. 1898 եր. 753. և Baumgartner-ի Über das Buch «die Chrie».

զանազան վարժութիւնների լեզուի մէջ: Մենք ցուցումներ ևս ունինք, որոնք կասկածելի են դարձնում Պիտոյից զիջքն ամբողջութեամբ մի մարդու գործ համարել:

Մեր մատենադարանի Կ. Յ. № 920 (940) ճառընտրի մէջ, որ գրուած է 1456 թուին մի հատուած կայ այսպիսի վերնագրով. «Արտասանութիւն Խոսքովկայ թարգմանչի ի մենամարտութիւն Դաւթի»: Այս հատուածը հրատարակեց Հ. Կալուստ Տ. Մկրտչեան, համարելով Ղազար Փարպեցու յիշած Խոսքովիկ թարգմանի գործ*: Այդ հատուածը ոչ այլ ինչ էր, բայց եթէ Պիտոյից գրքի մի վարժութիւնը: Կեղծիք համարելու այդ փոքրիկ վարժութեան վերնագիրը ոչ մի հիմք չունինք. անմատութիւն կլինէր որ և է միտումով այդ աննշան հատուածը նրան վերագրել: Ընդհակառակ վերնագրի վաւերականութիւնը պնդելու ցուցումներ ունինք: Է. դարու առաջին կիսից յետոյ ապրում էր մի հեղինակ Խոսքով հռետոր անունով**: Կորա գրուածներից մեզ յայտնի էին մի քանի պատառիկներ. մի հատուած ևս Չամչեանի մէջ (բ. 609). վերջին գրութիւնն ամբողջութեամբ հրատարակեց Վիեննայի Միթթարեաններից Ն. Ա. Հանդէս ամսօրեայում (1904 չոկ. նոյեմբ): Մենք առիթ ենք ունեցել արդէն այդ Խոսքով հռետորը նոյնացնելու Օձնեցու գործակից Խոսքովիկ թարգմանչի հետ, որ Մանագիւերտի ժողովի հայրերից մէկն էր†: Եւ յիշաւի Խոսքովիկ գրութեան ձևն ու ոճը ընթանում է միանգամայն Պիտոյից գրքի հռետորական ցուցումներով: Ասել է Խոսքովիկ թարգմանչի ինքը հռետոր է, ճարտասանական արուեստին հմուտ, զրեւ է նոյնպիսի վարժութիւններ (πρωτομαρτυρα), որոնցից մէկն այժմ մտած է Պիտոյից գրքի մէջ:

Որպէս զի մեր ասածն ընթերցողի համար թանձրա-

* Արարատ 1892, Դ.

** Խոսքովիկ թարգմանիչ և երկասիրութիւնք նորին. Գարեգին վ. Յովսէփեանի 1903, եր. Յառաջորան 29—30.

† Անդ. եր. 30.

նայ և հաւանական դառնայ՝ վերցնենք Խոսրովիկ Թարգմանչի հակաճառութիւններէց մի երկու բնորոշ տեղեր և համեմատենք Պիտոյից գրքի «Սահման ներբողինի» հատուածի տեսութեան հետ: Այստեղ հատուած է.* «Ներբողելի է զդէմն, և զիրս, և զժամանակս և զտեղիս . . . Եւ ի գովելն պարտ արժան է նախաշաւիղ առնել ըստ տեղւոյ պատճառին: Ապա դնել զազգն, և զայն բաժանել ի զաւառս, և ի նախածնողս, եւ ի հարս: Ապա զծնունդն . . . զգործսն . . . Այս տեսութեամբ էլ կազմուած է Մովսիսի ներբողեանը. յիշուած է նախ անունը, ապա զաւառը, նախահարք եւ ծնողք, ծնունդ, սնունդ, վարժութիւն, ամուսն, տեղափոխութեանութիւնը, կեանքը: — Խոսրովիկ Թարգմանչի ճիշդ նոյն եղանակով է բացատրում Քրիստոսի մարդկային յատկութիւնները. «Սոցա իւրաքանչիւր ոք յայտնի և բացորոշաբար բերէ և զդէմ, և զիրն և զտեղին, և զպատճառն, և և զեղանակ, և զժամանակ . . . եր 74: «Նշանակեալ լինի իւրաքանչիւրն ի սոցունց յայսցանէ. ի զաւառէն, ի ծնողաց, յորպիսութենէ երեւման, (սնունդ), ի ներգործութենէ և ի կրից (գործք) . . . դտանեմք զամենեսեան զայսոսիկ յարմարեալս ըստ մարմնոյ և ի վերայ Տեառն մերոյ և Փրկչին. յանուանէն՝ Յիսուս Քրիստոս, ի զաւառէն՝ Նազովրացի, ծնող ունելով զսուրբ Կոյսն, յորպիսութենէ՝ որով իւրիք ծանուցեալ լինէր, ի ներգործութենէ՝ զոր կատարեաց սքանչելիսն ի մարդիկ» . . . 30—31 եր: Նախաստեղծի մարդկային բնութիւնը հաստատելու համար յիշում է, որ նա ծնանելի, ամեցական, կերակրողական, տեղափոխական էր 90—91 եր: Համեմ. և եր. 94—95 Քրիստոսի վերաբերութեամբ**:

* Սրբոյ Հօրն մերոյ Մովսիսի Խորհնացւոյ մատնագրութիւնք, Վենետիկ, 1843, եր. 413.

** Մ. Աբեղեանը իւր «Հայ ժողովրդական Առասպելները» 1901, Վաղարշապատ, աշխատութեան մէջ ցոյց է տուել, որ Խորհնացին ևս Տիգրան Ա-ի պատմութիւնը նկարագրում է նոյն կանոններով՝ հետեւելով «Հիւսումն Պիտոյից» աղբիւրին:

Այս ցուցումներից պարզ պէտք է լինի, որ օտարոտի չէ, եթէ Խոսրովիկ թարգմանիչ կամ հռետոր վարժութիւններ գրած լինէր հռետորական արուեստի կանոններով, որոնցից մէկը բարեբաղդաբար պահուած է հեղինակի անուշով: Իսկ Պիտոյից զբքի մէջ մտնելուց յետոյ՝ որ դասագիրք էր, հեղինակի անունը հանուած է շատ հասկանալի կերպով: Այստեղ ունինք ուրեմն մի փաստ, որ Պիտոյից գիրքը մի հեղինակի գործ չէ:

Պիտոյից զբքի Զ-ների ուսումնասիրութիւնն ևս, կարծես, որոշ չափով նպաստում է այս ենթադրութեան հաստատութեան. ոմանց մէջ պակասում են բոլոր վարժութիւնները, ոմանց մէջ մի քանիսը, երբորդի մէջ տարբեր է վարժութիւնների դասաւորութիւնը: № 1810 (Կ. Յ. 1767) և № 1820 (Կ. Յ. 1777) ձեռագիրները միայն տեսական մասն ունին. առաջին երկու գրքերի վարժութիւնների նախաբանների հետ: Պակասում է նոյն իսկ վերջաբանը: № 1807 (Կ. Յ. 1764) առաջին գրքից պակաս է Գ. վարժութիւնը կամ օրինակը (տպ. մէջ 1843, Վենետիկ, եր. 347), Դ. վարժութիւնից յետոյ գրուած է երկրորդը, իսկ Ե.-ը ամենեւին չկայ: Երկրորդ գրքից պակաս են Բ. Գ. Ե. և Զ. վարժութիւնները: Յաղագս եղծման գլխում չկան Բ. և Գ. վարժութիւնները, Սահման հասարակ տեղւոյ գրքում չկան Ա. Դ. և Ե. վարժութիւնները, Սահման ներքողինի գրքում Ա. Բ. Դ. և Ե., Յաղագս Պարսաւի՝ մէջ Բ. Գ. Դ. Ե. վարժութիւնները: Իսկ Սահման քաղաատութեան, Սահման քարաոնութեան, Սահման դրութեան գրքերում չկայ ոչ մի վարժութիւն: Վերջին գրքից յետոյ անմիջապէս գրուած է «Զինչպիսի բանս ասիցէ երկիր ընդունելով զարիւն Աբելի արդարոյ» բնաբանով վարժութիւնը, որ տպագրուածի մէջ եր. 574 Բարաոնութեան յաւելուած վարժութիւն է: Այս Զ-ի մէջ պակասում են տպագրութեան յաւելուածի միւս վարժութիւններն ևս, ինչպէս և վերջաբանը առ թէոգորոս:

Արդ ինչո՞վ կարելի է բացատրել Զ-ների մէջ այսպիսի մեծ տարբերութիւնները: Մասամբ անշուշտ դորա պատճառն այն է, որ Պիտոյից զիրքը իբրեւ դասադիրք ենթակայ էր աւելի մեծ փոփոխութեան, քան սովորական ձեռագիրները, բայց ճշմարտութեանն աւելի մօտ է ընդունել, որ է. դարում յունասերների դպրոցում Պիտոյից զրքի տեսական մասի և բնաբաններից մի քանիսի թարգմանութիւնից և թարգմանչի կողմից մի քանի վարժութիւններ զնեւուց յետոյ, ուրիշներն ևս իրենց կողմից վարժութիւններ են զրել, որ մտել է Պիտոյից ներկայ զրքի մէջ: Այդպիսի մի փաստ տեսանք «Սահման Արտասանութեան» զրքի նախակրթութիւններից մէկի վերաբերութեամբ, որ Խոսրովիկ թարգմանչինն է ըստ վկայութեան № 920 ձեռագրի: Նոյն կարգին են պատկանում հաւանօրէն «Յաղագս շան» նախակրթութիւնը (զուցէ և ուրիշները), որի առնչութիւնը ցոյց տուինք Դաւիթ Հարքացու փոքրիկ գրութեան հետ:

Բառամգարտներ նոյնպէս նկատել է, որ ոչ միայն Պիտոյից զրքի ամբողջութեան մէջ լեզուի միութիւն չկայ, այլ և այդ գրութիւնն իւր բոլոր մասերով համապատասխան չէ այն յունական աղբիւրներին, որտեղից թարգմանուած են տեսութիւններն ու բնաբանները: Մինչդեռ տեսութիւնները (Սահմանք) գրուած են այնպիսի մի հայերէնով, որ շատ նիւթական և ստրկական թարգմանութիւն է յունարէնից, որ ընդհանրապէս յատուկ է է. դարու հելլենասերների դպրոցին — օր. Թրակացութեականութիւնը, Դաւիթ անյաղթի Սահմանքը և միւս փիլիսոփայական գրուածները, Ստեփանոս Սիւնեցու և Դաւիթ հիւպատի թարգմանութիւնները — նախակրթութիւնները համեմատաբար աւելի մաքուր հայերէն են, թէպէտ ոչ բոլորովին ազատ յունաբանութիւններից: Բառամգարտների վկայութեան համաձայն Սահմանները բառացի թարգմանութիւն են չնչին յայտաւորմաներով և մշակութիւններով Ափթոնիոսից, բայց ոչ նախակրթութիւն-

ները: * Յատկապէս նա ուշադրութիւն է դարձնում Բ. գրքի Գ. օրինակի վերայ (տպ. 361 եր): Այստեղ ոչ միայն նախակրթութիւնը ոչ մի նմանութիւն չունի Ափթոնիոսի հետ, որից հայ հեղինակն առել է Թէոգնիսի խօսքն իբրեւ բնաբան, այլ և այդ բնաբանի հեղինակ անուանել է վարժութեան մէջ Ռիաս իմաստակիրն: Այս հակասութիւնը Բաումգարտնէր փորձում է բացատրել այսպէս. Մովսէս քերպողը, երբ Թարգմանել է տեսական մասը Ափթոնիոսից, Թէոնից և Ն. ձեռքի տակ ունէր իւր յունարէն աղբիւրները, իսկ նախակրթութիւնների մշակութեան ժամանակ այդ աղբիւրները չունէր և միայն իւր կազմած ցուցակներից և քաղուածքներից էր օգտւում, որով և շփոթութիւն է ծագել:

Այս ենթադրութեան փոխարէն մենք զնում ենք մի ուրիշ աւելի հաւանական ենթադրութիւն, որ ինչպէս վերև տեսանք անհիմն չէ բոլորովին, այսինքն Թէ Պիտոյից գիրքը իւր ամբողջութեամբ Մովսէս քերպողինը չէ, այլ մաս ունին Դաւիթ փիլիսոփայ Հարքացին և Խոսրովիկ Թարգմանիչ, որով և աւելի դիւրին է բացատրել հակասութիւններն ու լեզուի տարբերութիւնները: Այս ենթադրութիւնը զօրանում է մատենադրական աւանդութիւններով, որոնք, ինչպէս յիշեցինք, Դաւիթ Հարքացուն են վերագրում Պիտոյից գիրքը: Ինչպէս և լինի, անվիճելի է, որ Դաւիթ Հարքացին ծանօթ էր «յաղագս շան» վարժութեան հետ: Իսկ այս իրողութիւնը մեզ համար մատենադրական կարևոր նշանակութիւն ունի Պիտոյից ներկայ գրքի ծագման մօտաւոր ժամանակը որոշելու, որ է. դարու երկրորդ կէսն է և Ը.-ի սկիզբը:

Պիտոյից գրքի գոյութիւնը է. դարից առաջ ապացուցանելու ոչ մի փաստ չունինք: Մովսիսի և Դաւիթի

* Տարաբաղաւարտ ձեռքի տակ չունինք Walz-ի Reth. Gr. հրատարակութիւնը անձամբ ևս ստուգելու այս տեղեկութիւնները և փարատելու մեր մէջ ծագած մի քանի տարակոյաները:

մասին կազմուած բոլոր աւանդութիւնները, որոնց համաձայն նրանք Ս. Սահակի և Մեսրոպի աշակերտ են և ե. դարու մապենագիրները, անվաւեր են: Այդ աւանդութիւնները պատմական մի հիմք ունին միայն. յիրաւի եղել են Մովսէս և Դաւիթ անուանով հայ մատենագիրները, Թարգմանիչներ և փիլիսոփաները, սակայն ոչ ե., այլ է. դարում: Պիտոյից զբքի գոյութիւնը է. դարում առաջին անգամ ցոյց տուաւ Բառամգարտներ իւր վերոյիշեալ աշխատութեան մէջ: Այդ ապացոյցը հետեւեալն է: Պիտոյից Ա. ե. վարժութեան բնաբանը առնուած է Թէոնից. Բառամգարտներ բերում է նրա բնագիրը Walz-ից Rett. Gr. I 204 եր. Θεανω ή Πυθαγορική φιλόσοφος, ἐρωτηθεῖσα ὑπο τινος, ποστὰία γυνή ἀπ' ἀνδρὸς καθαρά εἰς τὰ θεσμοφορεῖον κάτεισιν, εἶπεν. ἀπο μεν τοῦ ἱδίου παραχρῆμα, ἀπὸ δὲ τοῦ ἀλλοτρίου οὐδέποτε. Պիտոյից զբքի մէջ այդ խօսքը Թարգմանուած է այսպէս. «Զթէանով ոմն պիթագորական եհարց, եթէ յետ քանի՞ աւուր կնոջ առ այր մերձաւորութեան արժան է մտանել ի տէրունիւն: Եւ նա ասէ. յիւրմէ՛նոյն օրին. յօտարէն՝ և ոչ բնաւ երբէք: Այս խօսքն ունի և Սերէոս (Պատկ. հր. եր. 132), որ առել է Պիտոյից զբքից. «Զթէանով (ձեռ. Թէանով) ոմն զկին մարդ զաշակերտ Պիլթագորայ հարցեալ եղև թէ յետ քանի՞ աւուր մերձաւորութեանն ի կին մարդ արժան է յարքունիս մտանել: Եւ նա ասէ. յիւրմէն աւրէն է յաւտարէն և ոչ բնաւ: Սերէոսի Պիտոյից զբքից ունեցած կախման ապացոյց է նկատում Բառամգարտներ «տէրունիս» և «յարքունիս» բառերի շփոթութիւնը: Պիտոյից զբքի հեղինակը թεσμοφορεῖον բառը «տէրունիք» է Թարգմանել, իսկ Սերէոսի մէջ պահուած թղթի հեղինակը «տէրունիք» բառը հասկացել է «արքունիք» նշանակութեամբ:

Հ. Տաշեան ևս իւր «Սեկունդոս իմաստասէր» ուսումնասիրութեան մէջ* հետեւեալ զիտողութիւններն է անում այս խնդրի նկատմամբ: Ոչ Պիտոյից զբքի և ոչ Սերէոսի

* Մատենագրական Մանր ուսումնասիրութիւնք Ա.—Զ. եր. 215—218. Վիեննա, 1895:

վկայութիւնները բառացի թարգմանութիւն չեն վերոյիշեալ յոյն բնագրի. կան երկու ուրիշ թարգմանութիւններ «Բանք իմաստասիրաց» վերնագրով ժողովածուի մէջ, որոնցից մէկը միայն համեմատաբար աւելի բառացի թարգմանութիւն է. Ա. Թէմնաս ոմն կին պիթագորական հարցեալ թէ յիտ քանի՞ աւուր մացէ ի տուն կոոյ աւ որ լինի ընդ կնոջ, ասէ. յիւրն՝ նոյն աւրէն և յաւտարին՝ ոչ բնաւ:

Բ. Թէանով պիւթագորեան (Չեռ. Վիւն. Մխիթ. Թ. 29. Թղ. 217 ա «Պիթագորոն») հարցեալ՝ քանորեան՝ կին յառնէ մախուք ի քեամալիոռոնն իջանէ, ասաց. յիւրմէն (Չեռ. «յիւրէն») նոյն ժամայն, յաւտարէն՝ և ոչ երբէք: Արդարեւ երկրորդ փոփոխակը իւր ընդգծած մասով բառացի թարգմանութիւն է վերոյիշեալ յոյն բնագրի:

Հ. Տաշեան կարծում է Սերէոս ի նկատի է ունեցել, թէ Պիտոյից գրքի և թէ «Բանք իմաստասիրաց»-ի Ա. փոփոխակը:^{*} Մեզ համար կասկածելի է Սերէոսի առնչութիւնը «Բանք իմաստասիրաց»-ի հետ. «ոմն կին» «կարեւոր» ընթերցուածը Սերէոսն առել է ոչ թէ «Բանք իմաստասիրաց»-ից, այլ Պիտոյից գրքի վարժութիւնից, ուր կրկնուած է բնաբանը: Վարժութեան ազդեցութեամբ է մտել Սերէոսի մէջ նաև «աշակերտ Պիւթագորայ» կամ «Պիւթագորայի» բացատրութիւնը: Երևի Հ. Տաշեան ուշադրութիւն չէ դարձրել վարժութեան մէջ պահուած խօսքերի վերայ, ապա թէ ոչ յոյն բնագրին աւելի մօտ կգտնէր «յուլմեմէ» — ἀπὸ τινος — ընթերցուածով: Բնագրի և վարժութեան խօսքերն լրացնում են իրար և տալիս յոյն բնագրի թարգմանութիւնը, միայն ποστὰ τὴν γυνή απ' αὐ-

* Մ. Աթուռի մատենադարանի Գ. Յ. № 102 նշանաւոր ձեռագրի մէջ, գրուած 971 թ. պահուած է Սերէոսի մի հատուածը, ուր կայ և այս խօսքը. «Զթէանովն կին մարդ զաշակերտ Պիւթագորայի հարցեալ եղև թէ յիտ քանի աւուր մերձաւորութեան ի կին մարդ արժան իցէ յարքունիս մտանել: Եւ նա ասէ յիւրմէն նոյն աւրին. յաւտարին ոչ բնաւ, 191բ:

** Մայր Աթուռի մատենադարանի № 1810 (կ. ց. 1767) 387բ. ձեռագիրը հեռեկալ տարբեր ընթերցումներն ունի. «Զթէոնաս», «ասէ, ընդ իւրն նոյն աւրին, և ընդ աւտարին»:

ծրօς καθαρὰ εἰς τὸ θεσμοφορεῖον ἁγιάσαι» փոքր ինչ ազատ: Սերէ-
 ոսի և Պիտոյից գրքի միակ տարբերութիւնը «ի կին մարդ» և
 «կնոջ առ այլ» ընթերցուածներն են, որ մտքի փոփոխու-
 թիւն են յառաջ բերում սակայն այդ տարբերութիւնը
 Սերէոսի մէջ անկարելի է «Բանք իմաստասիրաց»-ի ազ-
 դեցութեամբ բացատրել: Մնացածի մէջ Սերէոսի փո-
 փոխակը միանգամայն հասկանալի է դառնում երբ ըն-
 դունենք, թէ թղթի հեղինակը կարգացել է Պիտոյից գրքի
 թէ՛ բնաբանը և թէ վարժութիւնը. «ի տէրունիսն» և
 «յարբունիս» բառերի շփոթութիւնը պարզ ապացոյց է,
 որ Սերէոսը առել է Պիտոյից գրքից և ոչ յունարէնից:
 Այդ շփոթութիւնը նախնական է Սերէոսի մէջ և ոչ յե-
 տին ժամանակի եղծուած, որովհետեւ ոչ միայն № 102
 ձեռագիրը 971 թուից նոյն ընթերցուածն ունի, այլ և
 հէնց Սերէոս ինքը նոյն խօսքը կրկնում է շարունակութեան
 մէջ: Արդեօք Սերէոսի թղթի հեղինակը «յարբունիս» բա-
 ռով «տէրունիս» բառի մեկնութիւնը կամ երկրորդ նշա-
 նակութիւնն է գրել, թէ այդ երկու արտաքուստ
 իրար շատ նման խօսքերի շփոթութիւն է այդ մենք հա-
 կուած ենք աւելի երկրորդն ընդունելու: Ինչ և իցէ,
 անհերքելի իրողութիւն պէտք է համարել, որ Սերէոսի
 թղթի հեղինակը Պիտոյից գրքի Ա. ե. բնաբանին և վար-
 ժութեան ծանօթ էր և ուրեմն այդ զիրքը գոյութիւն ու-
 նէր է. դարու կէսերին: Արդեօք թարգմանութիւնն էլ գո-
 րանից քիչ առաջ չի՞ ծագել:

Դ. Վ. Յովսէփեան

